# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 2007 թվականին
# SOCIO-ECONOMIC SITUATION OF THE REPUBLIC OF ARMENIA FOR 2007

- *Ժողովրդագրական իրավիճակ*

ՀՀ մշտական բնակչության թվաքանակի ցուցանիշը 2008թ. հունվարի 1-ի դրությամբ, ընթացիկ հաշվառմամբ, կազմել է 3230.1 հազ.մարդ, այդ թվում քաղաքայինը՝ 2069.4 և գյուղականը՝ 1160.7 հազ. մարդ: 2008թ. տարեսկզբի դրությամբ այս ցուցանիշը 2007թ. տարեսկզբի համեմատությամբ աճել է 7.2 հազ. մարդով, իսկ 2006թ. հունվարի 1-ի համեմատությամբ՝ 10.9 հազ. մարդով, արձանագրելով տարեկան 0.2%-ի աճ: Բնակչության հավելաճի 51.4%-ն արձանագրվել է գյուղական բնակչության թվաքանակի ցուցանիշում:

2007թ. ՀՀ մշտական բնակչության թվաքանակի աճն ապահովվել է բնակչության բնական հավելաճի, որը թեև 2006թ. նկատմամբ աճել է 27.2%-ով, և միգրացիայի մնացորդի ցուցանիշի 11.8 նվազման հաշվին:

- *Համախառն ներքին արդյունքի ցուցանիշ (ՀՆԱ)*

ՀՆԱ-ի արտադրության ծավալն, ընթացիկ գներով, 2007թ. կազմել է 3148666.1 մլն.դրամ, իսկ իրական ծավալի ինդեքսը 2006թ. համեմատ կազմել է 113.8%՝ 2006թ. 113.2% նույն ցուցանիշի դիմաց: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն 2007թ.-ին կազմել է 975907 դրամ (2853 ԱՄՆ դոլար կամ 2086 եվրո):

- *Արդյունաբերություն*

Հանրապետությունում 2007թ., ընթացիկ գներով, թողարկվել է 716549.3 մլն. դրամի, իրացվել 720168.0 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք,որից ԱՊՀ երկրներում՝ 76185.4 և այլ երկրներում՝ 176493.3 մլն. դրամի արտադրանք: 2006թ. նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 102.6%:

- *Գյուղատնտեսություն*

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2007թ., ընթացիկ գներով, կազմել է 633.9 մլրդ. դրամ՝ 2006թ.-ի մակարդակը գերազանցելով 9.6%-ով: Անասնաբուծության համախառն արտադրանքը կազմել է 204001.8 մլն. դրամ և 2006թ.-ի մակարդակը գերազանցել 4.3 %-ով, իսկ բուսաբուծությունում՝ 429876.0 մլն. դրամ և 2006թ.-ի մակարդակը աճել է 12.3%-ով:

- *Ձկնորսություն, ձկնաբուծություն*

2007թ. իրականացվել է 2119.3 մլն. դրամի ձկան որս, որը գերազանցել է 2006թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 18.7%-ով (համադրելի գներով):

- *Շինարարություն*

*<u>Բնակարանային շինարարություն:</u>* 2007թ.-ին հանրապետությունում պետական բյուջեի, մարդասիրական օգնության, կազմակերպությունների և բնակչության միջոցների հաշվին շահագործման է հանձնվել 469277 քառ.մ ընդհանուր մակերեսով 891 նոր բնակելի շենք կամ 2006թ.-ին գործարկված մակերեսի 128.3%-ը:

*<u>Իրականացված շինարարության ծավալ:</u>* 2007թ.-ին հանրապետությունում իրականացվել է 667344.7 մլն.դրամի շինարարություն,այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 224789.0 մլն. դրամի: Շինարարության ծավալում շինմոնտաժային աշխատանքները կազմել են 604927.7 մլն.դրամ, որոնցից արտադրական նշանակության օբյեկտների գծով՝181967.6 մլն. դրամ:

*<u>Հիմնական միջոցների գործարկում:</u>* 2007թ.-ին գործարկվել են 622939.0 մլն. դրամի հիմնական միջոցներ, այդ թվում արտադրական նշանակության օբյեկտների գծով՝ 275636.1-ի:

- *Demographic situation*

By January 1, 2008 the indicator of permanent population in Armenian Republic due to current stocks has made up 3230.1 thousand people, at the same time city population 2069.4 thousand people and rural ones – 1160.7 thousand people. By January 1, 2008 the indicator of permanent population in RA has grown by 7.2 thousand people in comparison with the beginning of the year 2007, and by 10.9 thousand people compared with January 1, 2006 so providing 0.2% of yearly increase. By the way, 51.4% of growth is recorded in rural population contingent.

In 2007, the permanent population increase appeared to be due to natural growth of population, which in comparison with 2006 decreased in 27.2%, but migration residue's negative indicator decreased in 11.8.

- *Gross Domestic Product Indicator (GDP)*

GDP production volume at current prices comprised 3148666.1 mln. drams for 2007, and growth rate in comparison with 2006 comprised 113.8%, for 2006 113.2% correspondent indicator. In 2007 GDP comprised 975907 drams (2853 dollars or 2086 euros) per capita.

- *Industry*

For 2007 industrial products amounting to 716549.3 mln. drams at current prices were produced in the republic, products amounting to 720168.0 mln drams were realized, in addition in the CIS countries correspondingly 76185.4 mln. drams, and in other countries – 176493.3 mln. drams. Volume index of industrial production in comparison with 2006 comprised 102.6 %.

- *Agriculture*

Gross agricultural output for 2007, at current prices comprised 633.9 bln. drams that exceeded the level of 2006 by 9.6%. Stock-raising gross output comprised 204001.8 mln. drams exceeding the level of 2006 by 4.3% and plant- growing gross output comprised 429876.0 giving way to level of 2006 by 12.3%.

- *Fish Hunting. Fish-Breed*

For 2007, in the republic was realized fish-hunting amounting to 2119.3 mln. drams, that exceeded the level of 2006 18.7% (at confronting prices).

- *Construction*

*<u>House construction</u>*

For 2007, in the republic at the expense of state budget, humanitarian aids, organizations and population resources 891 new residential buildings with total floor space of 469277 sq. m. were put into operation, or 128.3% of the space exploited for 2006.

*<u>Volume of Implemented Construction</u>*

For 2007, construction of 667344.7 mln. drams was implemented in the republic, including production units – 224789.0 mln. drams. In the volume of implemented construction the building and assembly jobs comprised 604927.7 mln. drams, including production units – 181967.6 mln. drams.

*<u>Capital Assets Exploitation</u>*

For 2007, capital assets of 622939.0 mln. drams were exploited, including on the production units of 275636.1 mln. drams.

- ***Տրանսպորտ***

***<u>Բեռնափոխադրումներ:</u>*** 2007թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը 2006թ.-ի նկատմամբ աճել է 6.4%-ով:

***<u>Ուղևորափոխադրումներ:</u>*** 2007թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորափոխադրումների ծավալը 2006թ. ցուցանիշի նկատմամբ աճել է 2.5%-ով:

***<u>Բեռնաշրջանառություն:</u>*** 2007թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառության ծավալը 2006թ.-ի նկատմամբ աճել է 21.4%-ով:

***<u>Ուղևորաշրջանառություն:</u>*** 2007թ. հանրապետությունում ընդհանուր օգտագործման տրանսպորտի ուղևորաշրջանառության ծավալը 2006թ. նկատմամբ աճել է 8.1%-ով:

- ***Կապ***

2007թ.-ին կապի ծառայություններից ստացված հասույթը ընթացիկ գներով, կազմել է 152310.9 մլն.դրամ (առանց ավելացված արժեքի հարկի), որը 2006թ.-ի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 23.8%-ով:

- ***Առևտուր և այլ ծառայություններ***

***<u>Մանրածախ առևտուր:</u>*** 2007թ.-ին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 934379.6 մլն. դրամ, որը 2006թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 10.0%-ով:

***<u>Ծառայություններ:</u>***

2007թ.-ին ծառայությունների ծավալը, ընթացիկ գներով, կազմել է 599435.6 մլն.դրամ, որը 2006թ.-ի նույն ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 21.8%-ով:

- ***Սպառողական գներ***

2007թ. դեկտեմբերին 2006թ. դեկտեմբերի նկատմամբ հանրապետության սպառողական շուկայում արձանագրվել է 106.6%-ը գնաճ՝ 2006թ.-ի համապատասխան ցուցանիշի 105.2% գնաճի դիմաց: 2007թ.-ին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.5% 2006թ.-ի նույն ցուցանիշի 0.4% գնաճի դիմաց:

- ***Զբաղվածություն***

***<u>Տնտեսապես ակտիվ բնակչության միջին տարեկան թվաքանակը</u>*** 2007թ.-ին հանրապետությունում, կազմել է 1184.3 հազ. մարդ, որոնցից 93.0 %-ը կամ 1101.5 հազ. մարդ զբաղված են եղել տնտեսության մեջ, իսկ 7.0 %-ը կամ 82.8 հազ. մարդ չեն ունեցել աշխատանք, գրանցվել են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության պետական ծառայություն» գործակալությունում և ստացել գործազուրկի կարգավիճակ:

- ***Արտաքին առևտուր***

ՀՀ արտաքին առևտրաշրջանառության ծավալը 2007թ.-ին, ընթացիկ գներով, կազմել է 1499.9 մլրդ. դրամ կամ 4420.1 մլն. ԱՄՆ դոլար, այդ թվում ապրանքների արտահանումը՝ 392.4 մլրդ. դրամ (ՖՕԲ գնով) կամ 1152.2 մլն. դոլար և ներմուծումը՝1107.5 մլրդ. դրամ (ՍԻՖ գնով) կամ 3267.8 մլն. դոլար:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը բացասական է 715.1 մլրդ. դրամով (2115.5 մլն. դոլարով), իսկ առանց մարդասիրական օգնությամբ ստացված բեռների՝ 690.7 մլրդ. դրամով (2043.6 մլն. դոլարով): 2007թ.-ին արտաքին առևտրի հաշվեկշիռը (արտահանումը և ներմուծումը հաշվարկված ՖՕԲ գներով) կազմել է 1603.7 մլն. դոլար:

- ***Transport***

*<u>Goods Transportation</u>*

In general use for 2007, the volume of goods transportation increased by 6.4% in the republic in comparison with 2006.

*<u>Passenger Transportation</u>*

For 2007 in general use, the volume of passenger transportation by transport means increased by 2.5% compared with the indicator of 2006.

*<u>Goods Turnover</u>*

In general for 2007, the volume of goods turnover by transport means in the republic increased by 21.4% compared with 2006.

*<u>Passenger Turnover</u>*

For 2007, on the whole, the volume of passenger turnover by means of transport increased by 8.1% compared with 2006.

- ***Communication***

For 2007, the volume of total receipts from communication services rendered comprised 152310.9 mln. drams at current prices (excluding added tax), wich compared with 2006 increased by 23.8% at confronting prices.

- ***Trade and Other Services***

*<u>Retail trade</u>*

For 2007, the total volume of retail trade turnover comprised 934379.6 mln. drams at current prices, which increased by 10.0% at confronting prices in comparison with the indicator of 2006.

***<u>Services</u>***

For 2007, the volume of the rendered services comprised 599435.6 mln. drams at current prices, which increased by 21.8% at confronting prices compared with the same indicator of 2006.

- ***Consumer Prices***

For 2007 December 106.6% of increase was ascertained in consumer market of the republic, compared with 2006 December. In 2007 average monthly increase of consumer prices comprised 0.5% compared with 0.4% decrease of the same indicator of 2006.

- ***Employment***

***<u>Average annual number of economically active population</u>***

For 2007, from 1184.3 ths. people only 1101.5 ths. people or 93.0% are economically active, and 82.8 ths. people or 7.0 % had no stable work, so were registered in the "RA Employment Service" Agency of the Ministry of Social Security of RA and got a status of unemployed.

- ***Foreign Trade***

The volume of RA foreign trade turnover comprised 1499.9 bln. drams or 4420.1 mln. dollars at current prices, including export of goods – 392.4 bln. drams (at FOB prices) or 1152.2 mln. dollars and import of goods – 1107.5 bln. drams (at CIF prices) or 3267.8 mln. dollars.

The foreign trade balance is negative by 715.1 bln. drams (2115.5 mln. dollars), excluding received humanitarian aid freights - by 690.7 bln. drams (2043.6 mln. dollars). For 2007, foreign trade balance (export and import computed at FOB prices) comprised 1603.7 mln. dollars.